



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան

10 Հուլիս 2015թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և Դավթեան – Մարիամեան կրթական հաստատությունը՝ կարևորելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը, մշակութային, կրթական, դաստիարակչական և քարոզչական ծրագրերի իրականացումը, կնքեցին համագործակցության հուշագիր հետևյալի մասին.


1. Մշակել և համատեղ իրականացնել մշակութային, կրթական, դաստիարակչական, քարոզչական և այլ ծրագրեր ու ձեռնարկներ Կալիֆորնիայի հայ համայնքում:
2. Նոր թափ հաղորդել «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխություններին, արժևորել հայ ուսուցչի գործունեությունը, հատկապես Սփյուռքում: Խրախուսել այն մանկավարժներին, որոնք Սփյուռքում դասավանդում են հայագիտական առարկաներ և այն աշակերտներին, որոնք ավարտում են Մայրենի լեզվի դասընթացը գերազանցությամբ:
3. Համագործակցել ՀՀ սփյուռքի նախարարության տարբեր ծրագրերի շրջանակներում. ապահովել նախարարության «Արի տուն», «Սփյուռք» ամառային դպրոց ծրագրերին Հաստատության աշխակերտների և ուսուցիչների

մասնակցությունը, համագործակցել Մայրենի լեզվի և հայ մշակույթի տարածմանն ու պահպանմանն ուղղված ձեռնարկների շրջանակներում:

4. Մշակել և իրականացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը, հայապահպանությանը նվիրված ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ծրագրեր:
5. Կողմերից որևէ մեկի առաջարկած համագործակցության յուրաքանչյուր ծրագիր, ձեռնարկ քննարկել և իրականացնելուց առաջ ստանալ մյուս կողմի սկզբունքային համաձայնությունը:
6. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:
7. Սույն համագործակցության հուշագրում ցանկացած լրացում կամ փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում առանձին արձանագրության տեսքով, որը կազմում է սույն համագործակցության հուշագրի անբաժանելի մասը:
8. Սույն համագործակցության հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ


10.08.2015թ

**ԴԱՎԹԵԱՆ - ՄԱՐԻԱՄԵԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

ՎԱՀԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

